

Հաստատում եմ»

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան

պետական համալսարանի

վեցերորդի ԺՊ՝ Ե. Ս. Սերոբյան



11 հունիսի 2021թ.

ԿԱՐԾԻՔ

### ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Նարինե Անդրանիկի Բուկուշյանի «Բանավոր թարգմանության ուսուցման լեզվամեթոդական համակարգ (կոմպետենտային մոտեցման հիման վրա)» թեմայով ատենախոսական աշխատանքի վերաբերյալ՝ ներկայացված մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար դասիչ ԺԳ. 00.02- «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն) մասնագիտությամբ:

Տվյալ թեմայի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից աշխարհում թարգմանության դերի բարձրացմամբ, որտեղ ինֆորմացիայի արագությունն ու ծավալը գնալով ավելանում են, և թարգմանությունը կոչված է ապահովելու ինֆորմացիայի հասանելիությունը: Ինֆորմացիոն տարածության չափերը և բազմալեզվությունը կանխորոշում են թարգմանության հասարակական նշանակությունը: Լինելով բարդ և բազմակողմանի երևույթ՝ թարգմանությունը հանդիսանում է տարբեր գիտությունների ուսումնասիրության առարկա: Տվյալ ատենախոսական աշխատանքում քննվում է թարգմանության ուսուցման խնդիրները, մասնավորապես՝ բանավոր հաջորդական թարգմանության:

Ատենախոսության ուսումնասիրության առարկան բալկալավրի թարգմանչական գործ կրթական ծրագրի եռալեզու ուսուցման գործընթացն է: Բուկուշյանի աշխատանքի մեջ խորը և համակողմանի բացահայտված են բանավոր թարգմանության ուսուցման հիմնական խնդիրները, ներկայացված է ամփոփ տեսական և մեթոդական գրականություն:

Ներածության մեջ ներկայացված է ուսումնասիրության վարկածը, աշխատանքային պլանը՝ ըստ փուլերի, հստակ սահմանված է աշխատանքի գիտական նորույթը, որում առանձնացված են վեց հիմնական կետեր: Գիտական նորույթը կասկածի տեղիք չի տալիս, քանի որ բխում է թեմայի ընտրությունից և ուսումնասիրության խնդրի արդիականությունից:

Աշխատանքը բաժանված է երեք գլուխների, տրամաբանորեն տրոհված ենթագլուխների, որոնք հյուսվածքով ներկայացնում են համապատասխան նյութն ու դրա վերլուծականը: Ներածությունը, գլուխների վերջում տրված ամփոփումներն ու ծանոթագրությունները, մասնավորապես նշենք նաև եզրակացություններն ու օգտագործված տարողունակ գրականության ցանկը լրացնում, հարստացնում և ընդունելի են դարձնում ատենախոսությունը՝ որպես գիտական ուսումնաքննություն:

Ատենախոսությունում հեղինակը կատարում է բավականին խորը և բազմակողմանի ուսումնասիրություն բակալավրի եռալեզու ուսանողների մասնագիտական պատրաստման առանձնահատկությունների վերաբերյալ: Հեղինակը մանրամասն և հաջորդաբար ներկայացնում է բանավոր եռալեզու թարգմանչի մասնագիտական կոմպետենցիաների զարգացման և ձևավորման մեթոդաբանությունը:

Հատուկ ուշադրության է արժանի աշխատանքի գործնական մասը, որտեղ ներկայացված է մշակված համակարգի փորձարկման ընթացքը հստակ կրթական ծրագրի շրջանակներում: Իրականացված փորձերի արդյունքները հարստացնում են աշխատանքի տեսական մասը:

Այնուամենայնիվ կուզենայինք ներկայացնել հետևյալ դիտարկումները.

1. Ատենախոսը աշխատանքում նշում է. *Մեր երկրում, ի տարբերություն արտասահմանյան առաջավոր համալսարանների փորձին, բազմալեզու թարգմանիչներին բանավոր թարգմանության հիմունքներն ուսուցանվում են մագիստրատուրայում՝ շաբաթական ընդամենը մեկ դասաժամի կտրվածքով* ինչո՞վ է հիմնավորվում հիշյալ դրույթը, քանի որ մասնագիտական բաժիններում, մասնավորապես թարգմանչական գործ բակալավրիատում վերջինս նույնպես ինչ-որ առումով շրջանառվում է:

2. Չնայած լեզվանյութն ընտրված է մասնագիտական տարաբնույթ ոլորտներից, սակայն ծավալայնության տեսակետից խիստ ընդգրկուն է, որը դժվարացնում է թարգմանական գործընթացը: Ցանկալի կլիներ մատնանշել մշակված նյութերի ընտրությունը՝ ելնելով մատչելիության սկզբունքից, հաջորդող տեքստերի լեզվական միավորների բաշխվածությունից, ինչպես նաև նշել, թե ինչ սկզբունքայնությամբ է համակարգվել դասանյութի բաշխումը:
3. Աշխատանքի փորձարարական մասում մեթոդները բավականաչափ արտացոլված չեն, որոնք կիրառվել են բակալավրի կրթական ծրագրի բանավոր թարգմանության դասընթացում: Ինչպես նաև նկարագրված չէ անցկացված փորձարարական աշխատանքի առաջադրանքների մեթոդաբանությունը:
4. Ատենախոսությունում ձևակերպված եզրակացությունները, ընդհանուր առմամբ, համապատասխանում են հետազոտության նպատակին և խնդիրներին, բայց դրանք շարադրված են նկարագրման եղանակով և ամբողջությամբ չեն արտացոլում իրականացված փորձարարական աշխատանքի արդյունքները:

Վերոնշյալ դիտարկումները ամենևին էլ չեն նսեմացնում սույն աշխատանքի արժեքը, ուստի միջնորդում ենք Խ. Աբովյանի՝ անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գործող գիտական աստիճաններ շնորհող 020 մասնագիտական խորհրդի առջև, որպեսզի աստենախոսության հեղինակին շնորհվի մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչ՝


Բ.գ.դ., պրոֆեսոր՝



Ա.Ա. Հովհաննիսյան

Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ՝


Բ.գ.թ., դոցենտ՝



Է.Ա. Մաթևոսյան

Ամբիոնների վարիչների ստորագրությունը հաստատում են:

ՇՊՀ-ի գիտաբարոնուղար

Կ. Պետրոսյան